

# Գ Ր Ա Կ Ա Ն

## ԽԱԶԵՑԵՍԼԻՆ

Մունջ սառւերներով ոքողուած դիշերն՝  
Սփոռում է դարձեալ իւր խաւար փեշերն,  
Հնչում են զանգերն տխուր, ողբաձայն,  
Երկինքն է լալիս մեղմ ու լռելեայն։

Ու հանդիսաւոր, գանդաղ քայլերով  
Գնում են մադիկ դէպ եկեղեցին  
Ու մրմունջներով ու թաց աչքերով  
Ուղում են սդալ ցաւերը Փրկչին։

Իսկ ես կանգնած եմ, նայում եմ անթարթ,  
Յուշերս բոլոր սև սոգը մտած՝  
Գալիս են տխուր, գնում են հանդարտ  
Մի խուլ, մի խաղաղ վշտով համակուած։

Ու ես տեսնում եմ իմ հոգուս աչքով  
Թէ ինչպէս անսիրտ ու բիրտ զինուորներն  
Մաղրում են Փրկչին փշեայ պսակով,  
Երեսին դիզում թուք ու ապտակներ։

Ու ես տեսնում եմ՝ թէ ինչպէս քրտնած  
Դէպ վեր է տանում նա իւր ծանր խաչ,  
Սիրելիների որտերը լքուած՝  
Խեղդում է լացը և ծանր հառաչ։

Եւ՝ թէ նա ինչպէս համակուած սիրով  
Ասում է նոցա գողդոջուն ձայնով.  
«Լացէք ձեր վերայ, — ես արի, անձայն  
«Կը տանեմ խաչս մինչեւ գերեզման։»

Տեսնում եմ նաև՝ ինչպէս նա դթած  
Բարկ արեի տակ մոռացած իւր ցաւն

Ազօթք է անում մարդկութեան համար,  
Հոգին աւանդում տակաւ առ տակաւ.

Ու դլուխը թեքած սիրազեղ կրծքին,  
Զեռներն ու ոտներն արիւնով ներկած,  
Նա պահ է մոհում խաղաղ դիշերին  
Վառ աստղերի տակ լուռ բազկատարած։

Կրկին դիշեր է, բայց տիսուր դիշեր,  
Փշում է քամին կոկիծով լեցուած,  
Ու այդ կոկիծով զարթնում են յուշեր  
Խաչի ցաւերով խաղառ համակուած։

Ու կարծես քամին ասում է դարձեալ,  
«Լացէք ձեր վերայ աշխարհի որդիք,  
«Չեղ համար մեռաւ Տէրը Խաչեցեալ  
«Մահով ջնջելու ձեր դատակնիքն։»

«Բայց դուք մտքով կոյր, կոյր նոյնպէս հոգով,  
«Գնում էք անշեղ դէպի կործանումն.  
«Եւ անդիտակից ձեր ծանր բազդին  
«Դուք ձեր պապերի արածն էք անում։»

«Դուք դարձեալ արդար արեան ծարաւի՝  
«Խաչ էք պատրաստում արդարի համար,  
«Չեր միտքը ծախած կասկածի ու դաւի  
«Մեղքեր էք դործում ծանր ու անհամար։»

«Լացէք ձեր վերայ, դուք դեռ մոլորուած  
«Արեան արցունքի գետեր էք սիրում,  
«Մատնիչ, մեղսասէր ու դարան մտած  
«Չեղ համար անկման նոր դուք էք փորում։»

Ա. Պ.

1903 թ. Ապրիլի 4-ին.

